ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԶՈՎՈՒՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՀԱՇՎԵՏՈՒ ԺՈՂՈՎԻ

Սույն թվականի օգոստոսի 2-ին ՀՀ Կոտայքի մարզի Զովունի համայնքում տեղի ունեցավ համայնքի ղեկավարի 2012 թվականի մինչև օգոստոս ամիսն ընկած ժամանակահատվածի հաշվետու ժողովը:

Ժողովին ներկա էին համայնքի ավագանու անդամներ՝

1. Շահեն Մուշեղյան
2. Էդվարդ Մարգարյան
3. Հովհաննես Հայրապետյան
4. Վարդան Սիմոնյան
5. Հրաչյա Ավետիսյան
6. Արմեն Ալեքյան
7. Արայիկ Մեսրոպյան
8. Կարեն Խաչատրյան
9. Կարեն Հարությունյան
10. Հայկ Աբգարյան

համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցները՝

1. համայնքի ղեկավարի տեղակալ Սուրեն Բաղդասարյան
2. համայնքի ղեկավարի օգնական Սիրական Բաղդասարյան
3. աշխատակազմի քարտուղար Ռուբեն Բաբայան
4. գլխավոր մասնագետ Արշակ Պետրոսյան
5. առաջատար մասնագետ Արթուր Հովհաննիսյան
6. առաջատար մասնագետ Երջանիկ Գալստյան
7. 1-ին կարգի մասնագետ Համեստ Թումասյան
8. հարկահավաք Գուրգեն Մեսրոպյան
9. համակարգչային օպերատոր Աննա Փինաչյան
10. տրակտորիստ-մեխանիզատոր Մարատ Սիմոնյան
11. տրակտորիստ Գևորգ Հովհաննիսյան
12. գերեզմանատան պահակ Հովհաննես Հովհաննիսյան
13. գյուղապետարանի պահակ Բաբիկ Գալստյան

Մշակութային կենտրոնի ՀՈԱԿ-ի կազմակերպիչ Արարատ Արշակյան, «Զովունիի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրեն Սմբատ Թորոսյան, միջնակարգ դպրոցի տնօրեն Վարդան Ղազարյան համայնքի բնակիչներ՝ Գետևոն Հարությունյան, Ժորա Հովհաննիսյան, Սամսոն Հարությունյան, Լևոն Վարդանյան, Նախշուն Հովսեփյան Գառնիկ Դանիելյան և այլն:

Բացման խոսքով ելույթ ունեցավ համայնքի ղեկավար Սերժիկ Ավետիսյանը, նշելով որ ժողովի նպատակը Զովունի համայնքում վերջին 7 ամիսներին իրականացված աշխատանքների մասին ներկայացնելն է:

ՕՐԱԿԱՐԳ

1. Համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի կողմից կատարված աշխատանքների հանրային իրազեկման մասին:
2. Ընթացիկ կամ այլ հարցեր:

ԼՍԵՑԻՆ

Ժամանակին կայացել են համայնքի ավագանու նիստերը: Որոնք համապատասխանել են ՀՀ Տեղական ինքնակառավարման մասին օրենքի պահանջներին: Ավագանու կայացած որոշումներում եղել են մասնակի բացթողումներ , որոնք մարզպետարան ժամանակին լրացվել և ուղղվել են մարզպետարանի բաժինների համապատասխան զգուշացումներից հետո:

2012 թվականի ընթացքում համայնքի բյուջեի հաշվին և համայնքի ղեկավարի նախաձեռնությամբ կատարվել են հետևյալ աշխատանքները...

1. 2012 թվականին կապված Սուրբ ծննդյան և ամանորի տոնակատարության հետ միջոցառում է կազմակերպվել մշակութի տան դահլիճում:
2. Մայիսի 9-ի հաղթանակի օրվան նվիրված տոնական միջոցառումների շարքից համայնքի ղեկավարի և ավագանու նախաձեռնությամբ կազմակերպվել է տոնական միջոցառումներ, որի ընթացքում մասնակիցներին տրվել է ճաշկերույթ:

Համայնքում քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում կատարված աշխատանքների վերաբերյալ.

2012 թվականի յոթ ամիսների ընթացքում համայնքում տրամադրվել է համապատասխանաբար

1. 35 շինարարության թույտվություն
2. 3 քանդման թույլտվություն
3. 9 ավարտական ակտ

Համայնքում կատարվել է ամենշաբաթյա աղբահանության համայնքի բյուջեի միջոցներով թվով երկու տրակտորների միջոցով, ինչի համար համայնքի բյուջեից տրամադրվել է 840000 դրամ գումար.

Համայնքում առևտրի և ծառայությունների բնագավառում կատարված աշխատանքների մասին.

Համայնքում 2012 թվականի հուլիս ամսվա դրությամբ գործում են 21 առևտրի, 2 հանրային սննդի կազմակերպություններ, 3 կենցաղային ծառայության օբյեկտներ, 1 դեղատուն, 1 շինարարական նյութերի խանութ, 3 բենզալցակայան, 2 ԱԳԼՃԿ, 2 խաղատուն և 7 խաղասրահ:

ԵԼՈՒՅԹՆԵՐ

. 1. Ելույթ ունեցավ «Զովունիի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրեն Սմբատ Թորոսյանը, նշելով որ արդեն ավարտվել է մանկապարտեզի մեկ մասնաշենքի վերանորոգման աշխատանքները, իսկ այժմ ընթացքի մեջ է 2-րդ և 3-րդ մասնաշենքերի վերանորոգման աշխատանքները, որոնց կատարման ընթացքը գտնվում է համայնքի ղեկավարի ամենօրյա ուշադրության կենտրոնում և շուտով կհանձնվի շահագործման:

. 2. Ելույթ ունեցավ դպրոցի տնօրեն Վ. Ղազարյանը, նշելով որ որպես դպրոցի տնօրեն շնորհակալություն է հայտնում համայնքի ղեկավար Ս. Ավետիսյանին դպրոցի վերանորոգման կապիտալ աջակցության համար:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

Լրացուցիչ ծանուցումներով տեղյակ պահել գույքահարկի և հողի հարկի խոշոր պարտք ունեցող քաղաքացիներին, դիմել մարզային իշխանությանը այս հարցում աջակցելու խնդրանքով, համայնքի տարածքում աղբ թափող քաղաքացիներին և իրավաբանական անձանց ենթարկել համապատասխան տույժերի և այլն:

ՈՐՈՇՎԵՑ

Գլխավոր մասնագետ Արշակ Պետրոսյանը, համայնքի ղեկավարի տեղակալ Սուրեն Բաղդասարյանը և աշխատակազմի քարտուղար Ռուբեն Բաբայանը խոշոր պարտք ունեցող քաղաքացիներին որոշեցին նույնպես լրացուցիչ տեղյակ պահել իրենց չկատարած վճարումների մասին և անձամբ այցելել նրանց բնակարանները՝ ծանոթացնել ՀՀ 21.03.2012թ. կապված գույքահարկի և հողի հարկի գծով ապառքներից ազատվելու օրենքի պահանջներին: